ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. փետրվարի 26-ից 29-ը Իրաքի Հանրապետություն (Բաղդադ, Էրբիլ) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը**

Հակոբ Վարդանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

Իրաքի Հանրապետություն (Բաղդադ, Էրբիլ), փետրվարի 26-ից 29-ը

4. **Հրավիրող կողմը**

Իրաքի Հանրապետություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

ՀՀ նախագահի պատվիրակության կազմում այց:
Իրաքի իշխանությունների հետ էներգետիկ հնարավոր համագործակցություններին առնչվող հարցերի քննարկում:

6. **Քննարկված թեմաները**

Քննարկվել են ՀՀ-ից Իրանի տարածքով դեպի Իրաք էլեկտրաէներգիա արտահանելու հնարավորությունները:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Հանդիպում է տեղի ունեցել էներգետիկայի փոխնախարար Ադել Քարիմի հետ:

8.**Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Պայմանավորվածություն է ձեռք բերվել էներգետիկայի արտահանման հարցին անդրադառնալ այն ժամանակ,երբ ՀՀ-ն հնարավորություն կունենա առնվազն 500-600 Մվտ ամբողջ տարվա ընթացքում կայուն արտահանում իրականացնել.ավելի փոքր քանակով հետաքրքրված չեն:

Իրաքյան կողմը հետաքրքրություն է ցուցաբերել ՀՀ-ում արտադրվող էլեկտրոտեխնիկական սարքավորումների նկատմամբ.

- Բարձր լարման տրանսֆորմատորներ
- Բարձր լարման ենթակայանների համար նախատեսված անջատիչներ,բաժանիչներ,ինչպես նաև մալուխներ:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Առաջարկվել է ՀՀ արտադրողներին գործուղել Իրաք՝ դիտարկելու Իրաքի էլեկտրաէներգետիկ համակարգի արտադրական և քանակական պահանջները և եթե հայկական կողմից դրանք բավարարելու պատրաստակամություն լինի,պատրաստ են քննարկել հնարավոր համագործակցությունները:

Իրաքի էներգետիկայի փոխնախարարը հայտնել է նաև,որ իրենց մոտ գործում է ծրագիր,որի շրջանակներում արևային կայանների կառուցապատողներին 4 - 4,6 դոլարային ցենտ 1 կվտ ժամի համար գնման երաշխիք են տալիս:

Նշվեց,որ որոշակի տեխնիկական պայմանների բավարարման դեպքում պատրաստ են դիտարկել նաև հայ ներդրողների հետ այդպիսի համագործակցություններ:

10. <u>Ստորագրությունը, ամսաթիվը</u>

04.03.2024